# ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՍԿՈ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

**ԿԱՍԿՈ ապահովագրությամբ փոխհատուցվում են Ձեր ավտոմեքենային հասցված ֆիզիկական վնասները և կորուստը՝ անկախ նրանից, թե ով է հանդիսանում պատահարի մեղավոր կողմը:**

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ՌԳՍ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1
Հեռ.՝ (+374 12) 88 88 88
Կայք՝ www.rgs.am

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

- Ճանապարհատրանսպորտային պատահար,
- Հրդեհ, պայթյուն, ինքնայրում,
- Տարերային աղետներ (բացառությամբ երկրաշարժի),
- Կենդանիների գործողություններ,
- Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ, առևանգում,
- Թռչող կամ վայր ընկնող առարկաներ,
- Ջուրը մտնելուց կամ ջուրն ընկնելուց վնաս,
- Լուսացույցի կարմիր արգելող ազդանշանի տակ մուտք գործելու,հանդիպակաց ուղեմասով երթևեկելու, սահմանված արագության ավելի քան 50% գերազանցման հետևանքով առաջացած վնաս:

## ԼԻԱԶՈՐՎԱԾ ՎԱՐՈՐԴՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

Ցանկացած անձ, ով ունի տվյալ ավտոմեքենայի վարման համապատասխան դասի վարորդական իրավունք:

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ՌԳՍ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 03.03.2014թ. նիստի թիվ 02 արձանագրությամբ հաստատված Ավտոմեքենայի կամավոր ապահովագրության պայմաններում՝ այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:

## ՈՐՏԵՂ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ և ԼՂՀ

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում /վերակնքվում է վարկի գործողության ողջ ժամկետում՝ բացառությամբ վարկային պայմանագրով սահմանված դեպքերի:

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

Կարգավորվում է Ձեր վարկային պայմանագրով և/կամ հրապարակային օֆերտայով սահմանված պայմաններով:

## ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Համաձայն վարկային պայմանագրի՝ Ձեր կողմից ապահովագրավճար չի վճարվում:

## ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Պատահարի տեղի ունենալուց կամ հայտնի դառնալու պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 3 ժամվա ընթացքում անհրաժեշտ է վանգահարել (+374 12) 88 88 88 հեռախոսահամարով,
- Հրդեհի կամ պայթյունի դեպքում վանգահարել ԱԻՆ 101 համարով, ՃՏՊ-ի դեպքում՝ ՃՈ 177 կամ 010 522 763 համարով, երրորդ անձանց կողմից հակաօրինական գործողությունների և առևանգման դեպքում՝ Ոստիկանություն 102 համարով,
- Շտեղաշարժել ավտոմեքենան մինչև ապահովագրական ընկերության և ՀՀ ՃՈ-ի ժամանումը, գրանցել ՃՏՊ-ի մասնակից ավտոմեքենաների տվյալները,
- Առանց ապահովագրական ընկերության համաձայնության ոչ մի դեպքում չընդունել Ձեր մեղքը՝ լրիվ կամ մասնակի և չվերցնել ոչ մի պարտավորություն Ձեզ վրա:

## ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

- Ֆիզիկական վնասի դեպքում՝ ապահովագրական գումարի 1%, սակայն ոչ պակաս քան 20,000 ՀՀ դրամ: Եթե պատահարի պահին վարորդի վարորդական փորձը 3 տարուց ցածր է կամ նրա տարիքը 21-ից ցածր է, ապա չհատուցվող գումարը կրկնապատկվում է,
- Առևանգման կամ ավտոմեքենայի ամբողջությամբ կորստի դեպքում ապահովագրական գումարի 5%, իսկ հակաառևանգման ապդանշանային համակարգի առկայության դեպքում՝ 3%:

## ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ապահովագրական պատահարի տեղի ունենալուց և այդ մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում լրացնել հայտային դիմումը ընկերության գրասենյակում կամ առցանց եղանակով՝ այցելելով www.rgs.am կայքի «Առցանց ծառայություններ» բաժին,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

## ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Ավտոմեքենան ոչ անձնական նպատակներով (օրինակ՝ որպես տաքսի, ուսուցման, վարձակալության և այլն) շահագործելու,
- Սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությանը և համապատասխան իրավասու մարմիններին ապահովագրական պատահարի մասին չտեղեկացնելու,
- Ալկոհոլի կամ թմրանյութերի, ինչպես նաև տոքսիկ նյութերի ազդեցության տակ ավտոմեքենան շահագործելու,
- Ապահովագրության պայմաններով սահմանված պարտավորություններից որևէ մեկը խախտելու, ինչի արդյունքում հնարավոր չի եղել որոշել ապահովագրական պատահարի հանգամանքները կամ պատճառը կամ հնարավոր մեղավոր անձանց կամ վնասի չափը,
- Լիազորված տիրապետողի, ավտոմեքենայի սեփականատիրոջ կամ ուղևորի կանխամտածված գործողությունների հետևանքով,
- Ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ պատերազմական այլ միջոցառումների, քաղաքացիական պատերազմների, ապստամբությունների, ժողովրդական հուզումների, ներխուժումների, հեղափոխությունների կամ ահաբեկչության դեպքում,
- Ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկով նախատեսված անսարքություններով և պայմաններով ԱՄ-ն վարելու, ինչպես նաև ավտոմեքենան 0°C օդի ջերմաստիճանից ցածր օդի ջերմաստիճանի պայմաններում ձմեռայինից տարբեր անվադողերով օգտագործվելու արդյունքում,
- «ՌԳՍ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 03.03.2014թ. նիստի թիվ 02 արձանագրությամբ հաստատված Ավտոմեքենայի կամավոր ապահովագրության պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

## ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

**Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:**

**Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:**